

2 Падр архитектур
РГДЗ архив

338
—
8-33

25 APR 2013

17 FEB 2010

338

- 33

5

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Սոցիալական Թաստիարակության Գլխ. Վարչություն

№ 15 ՀԱՍՏՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 15

Բ. Ն. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ ՅԵԿ Ա. Ն. ԶՅՈՒԲԻՆՍԿԻՑ

ՄԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

13338

Թագ. Հ. Հ Օ Գ. Յ. Կ Ի Մ Յ Յ Ո Ւ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ. 1927

33-87

ՏՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: ԱՐՁԵՍ: ՏՆԱՅԻՆԱԳՈՐԾՈՒ-
ԹՅՈՒՆՆՐ ՄԻՆՉԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.

Ս. բ յ ու ն ա բ ե ։ Արտադրության յերկու հիմնական բաժին-
ու ը բ յ ա ն ա ն ե գ ե ր ը ։ Ներն են արդյունաբերությունը և գյուղա-
տնտեսությունը։ Արդյունաբերության մեջ մարդը ներ-
գործում ե ա ն կ ե ն դ ա ն ք բ ն ու թ յ ա ն և ա ն ո ր դ ա ն ա կ ա ն պ ր ո-
ց ե ս ս ն ե ր ի վ ր ա , ի ս կ գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ա ն մ ե ջ՝ կ ե ն դ ա ն ի
ո ր դ ա ն ի զ մ ն ե ր ի , կ ե ն ս ա կ ա ն պ ր ոց ե ս ս ն ե ր ի վ ր ա ։ Ա ր դ յ ո ւ ն ա-
բ ե ր ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ը լ կ ա տ ա ր վ ու մ ե ա ր հ ե ս տ ա կ ա ն մ ի .
Զ ա վ ա յ ր ու մ , վ ո ր ս տ ե ղ ձ ու մ ե հ ե ն ց ի ն ք ը մ ա ր դ ը , ի ս կ
գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ը տ ե ղ ի յ ե ու ն ե ն ո ւ մ ք ն ո ւ թ յ ա ն մ ե ջ ,
ը ն ա կ ա ն մ ի շ ա վ ա յ ր ու մ :

Նալած արդյունաբերական աշխատանքի արտասիր-ների (պրոդուկտ) վաճառման պայմաններին, արտադրության պրոցեսսի տեխնիկական առանձնահատկություններին և բանվորի գեղի գործատերն ունեցած հարաբերություններին՝ կարելի յե վորոշել արդյունաբերության վեց հիմ-նական ձև. — 1) անալին արտադրություն, 2) արհեստ, 3) տնայնագործություն, 4) մանուֆակտուրա, 5) Փարզիկա և 6) արտադրողական արտել կամ արտադրողական ընկերություն:

Տեսակն արտադրություն ե կոչվում,
գրություն: յերբ արդյունաբերական գործվածքները
պատրաստվում են գործե տնտեսության սեփական կա-
րիքների համար և այն ել, իբրև ընդհանուր կանոն, հենց
նույն այդ տնտեսության սահմաններում ձեռք բերած
հում նլութից: Արդյունաբերության այդ ձեռք շատ ավե-



Ա հին և հողագործությունից։ Նույնիսկ զարգացման շատ ցած մակարդակի վրա կանգնած ժողովուրդները ծանոթ են զանազան արդյունաբերական վարպետության—նետ-աղեղ շինելուն, ծառերի կեղևից կամ արմատներից ամաններ հյուսելուն, բրուտության, կաշի դաբաղելու և այլն։ Ցերք հողագործությունն առաջ յեկավ, արդյունաբերության այդ ձեն ափելի ևս զարգացավ։ Մինչև այժմ ել գյուղական ընտանիքներն այն վայրերում, ուր փոխանակությունը շատ քիչ ե զարգացած, իրենց կարիքների մեծ մասը բավարարում են հենց իրենց աշխատանքով։ Հենց ալժմ ել Խորհրդային Միության խուլ անկյուններում գյուղական ընտանիքն ինքն ե պատրաստում իր հագուստը վուշից, բամբակից, բրդից կամ այլ նյութից, վոր ինքն ե մշակել, իր սեփական ձեռքերով ե շինում իր տունը իր իսկ անտառի վայտից, ինքն ե պատրաստում իր տրեխները և այլն և այլն։

Դրա զարգաց- Սեփական կարիքները բավարարող արման առաջին տարբությունն իր աստիճանական զարաստիանելուց։ գացման ընթացքում յերկու շրջան ե անցնում։ Սկզբնական շրջանում արտադրության արգասիքն ամենաին չի վաճառվում, արտադրողն ինքն ե սպառում ամրողը։ Յերկրորդ շրջանում արգասիքի վորոշ մասը—ափելցուկը, վոր արտադրողին պետք չե իր սեփական գործածության համար,—վաճառքի յե դրվում, տեղի յեռնենում փոխանակություն։ Առաջինից յերկրորդ շրջանին առաջ ե գալիս գլխավորապես գյուղացիական տնտեսության շերտավորման պատճառով։ Գյուղացին, վորպեսզի բավարարի իր բոլոր տնտեսական պահանջները, պետք ե ունենա հողամասի վորոշ մինիմում։ Քանի դեռ այդ մինիմումը կա, նա կարիք չի զգում դրսից իր սպառման համար անհրաժեշտ պիտույքներ գնելու։ Բայց գյուղական ազգաբնակությունը շերտավորվում ե, առաջ

են գալիս մեծ հողատերեր, վորոնք իրենց պետքից ավելի արգասիքներ են արտադրում, և սակավահող գյուղացիներ, վորոնց չեն բավականացնում իրենց արտադրած արգասիքները։ Մեծ հողատեր տնտեսություններն սկսում են ծախել իրենց արգասիքների ավելցուկը, իսկ սակավահող ընտանիքներն ստիպված են լինում գնել՝ ինչ վոր պակասում ե իրենց։ Այսպիսով, գյուղացու աշխատանքի արգասիքը հանվում ե տեղական շուկան, իսկ այնուհետեւ ընկնում ե առեսրի խողովակների մեջ։

Մեր գյուղի շուկաներում սովորաբար կարելի յե տեսնել գյուղացիական տնային արտադրության զանագան արգասիքներ,—քաթան, մանած, մահուդ, փայտից շինած իրեր և այլն, վոր արտադրված են վոչ թե հատեղապես ծախելու, այլ սեփական գործածության համար, բայց ծախու յեն հանված կամ սեփական տնտեսության համար ավելորդ լինելու և կամ փողի կարիք ունենալու պատճառով։ Հենց դրա համար ել ներկա դեպքում մենք գործ ունենք վոչ թե արհեստի կամ տնայնագործական արդյունաբերության, այլ գարձյալ նույն տնային արտադրության հետ, վոր պատահաբար կամ մասսմբ ե միայն աշխատում վաճառելու համար։

Յ ն ա յի ն արտա- Տնային արտադրության քայլայման գրույան բայքա- պրոցեսն առաջ ե գնում փոխանակային յումը։ տնտեսության աճման զուգընթաց։ Դեռ ալժմս ել, մեր աշքերի առջև, արտադրության մի ճյուղը մյուսի յետեկից պոկվում ե տնային տնտեսությունից և ինքնուրույն ձեռնարկության բնույթ ստանում։ Այսպես, որինակ, քիչ առաջ սպիտակեղենի լվացքն արտասահմանում տնային տնտեսության մի ճյուղն եր կազմում, ճիշտ ալնպես, ինչպես հագուստ կարելը, գուլպա գործելը, հաց թխելը և այլն։ Մեզնում։ Խորհրդային Միության մեջ, մինչև այժմ ել կերպակուր պատրաստելը, նույնիսկ քաղաքում, կազմում ե տնային տնտեսության հաստատուն

բաղկացուցիչ մասը։ Բայց Արևմտյան Յեվրոպայում և
Ամերիկայում ճաշարանային կյանքի զարգացումը հետըգ-
հետեւ մահվան եւ դատապարտում նաև տնային տնտեսու-
թյան այդ ճյուղը։

Այսուամենայնիվ կան վորոշ պայմաններ, վորոնք
պահպանում են գյուղում արդյունաբերության այդ ձեր,
ինչպես և մանր գյուղացիական արդյունաբերության մլուս
ձևերը։ Բանն այն եւ, վոր արտադրության պրոցեսը հողա-
գործության մեջ ընդհատվում եւ ձմեռվան ամիսներին։
Խորհրդակին Միության շատ վայրերում, ցուրտ կլիմայի
պատճառով, այդ ընդհատումները շատ էրկար են տևում—
տարվա մեծ մասը։ Զմեռը հողագործի աշխատանքը յեթե-
բոլորովին չի դադարում, համենայն դեպս մեծ չափով
կրճատվում եւ հողագործին մնում եւ գլխավորապես իր
անասունները խնամել։ Զմռան արդ ազատ ժամանակի
գորությունը հենց պահպանում եւ գյուղական տնտեսու-
թյան զանազան տեսակի տնային արդյունաբերությունը։
Գյուղացին կարող եւ շահագետ համարել ձմեռն իր տնտե-
սության արգասիքների մշակելը, թեկուզ նրա աշխատանքը
վարձատրվի ամենաչնչին չափով։ Այսպես, որինակ, մեր
գյուղերում մինչև այժմ ել լայն չափով տարածված եւ
տնային մանվածքն ու ջուհակությունը՝ սեփական կարիք-
ների համար։ Վուշի, կանեփի* մանելը ձմեռ ժամանակ մեր
գեղջկուհիների գլխավոր զբաղմունքն եւ Յեթե թել մա-
նելը փողով գնահատելու լինենք, չափազանց չնչին գու-
մար կստանանք։ Ամբողջ շաբաթվա ընթացքում գեղջկու-
հին մանելու համար կվաստակի վոչ ավելի քան 60-70
կոպեկ։ Չնայած դրան՝ տանը մանելը—տնային ջահրան,
իլիկը—պահպանվում եւ չափազանց համառ կերպով։ Առանց
դրան գեղջկուհու բանվորական ուժը կարող եւ ամենաին
գործադրություն չգտնել։ դրա համար ել գյուղացին

գտնում ե, վոր ավելի լավ ե չնչին բան վաստակել, քան
ամենաին չվաստակել։

Արեւս. Տեսանքով արդյունաբերական աշխատանքի
միմյանցից զատվող և առանձնացող ճյուղերն արհեստի
բնույթ են ստանում։ Արհեստ ասելով հոսկանում ենք
արդյունաբերության այնպիսի մի ձեւ, վորի դեպքում մանր
արտադրողը վոչ թե իր գործածության համար ե արգա-
սիք պատրաստում, այլ կողմնակի սպառողի, առանց վոր-
եւ առևտրական միջնորդի։ Կարելի լե տարբերել արհես-
տի յերկու տեսակ—վարձու և ծախու, Առաջին դեպքում
արհեստավորն սպառողի պատվերով մշակում ե այն հում
նյութը, վոր պատկանում ե հենց սպառողին։ Արհեստա-
վորն այդ դեպքում պատրաստվող արգասիքի սեփակա-
նատերը չի։ Այդ արգասիքն արտադրության ամբողջ ըն-
թացքում պատկանում ե պատվեր տվողին։ Յերկրորդ
դեպքում արհեստավորը մշակում ե իրեն իսկ պատկանող
հում նյութը, վոր ձեռք ե բերել իր սեփական տնտեսու-
թյան մեջ կամ գնել իր հաշվին։ Արգասիքն այս դեպքում
պատկանում ե սկզբում արհեստավորին, իսկ հետո դառ-
նում ե սպառողի սեփականությունը։

Արհեստի առաջին ձեւ ավելի հին եւ: Չափազանց պարզ գործիքների տեր ար-
հեստավորը ըրջում ե սպառողների տնե-
րը, աշխատանք ե վորոնում և գտած աշխատանքը կատա-
րում ե հենց պատվեր տվողի տանը։ Վարձու արհեստի
այս ձեր, վոր կարելի յե անվանել արտատնային արվեստ,
մինչև այժմս ել գյուղացիուն ունի և շատ ե տարածված
ժամանակ ու ուսական գյուղերում։ Այդպիսի արտատնա-
յին վարձու արհեստավորներ են, որինակ, բուրդ-բամբակ
գզողները, հյուսները, քարտաշները, դանակ սրողները,
ապակի գցողները և այլն։ Արտատնային արհեստի բնորոշ
գիծն այն ե, վոր արհեստավորն աշխատում ե գործ ավողի

* Մեզնում տարածված ե բուրդ-բամբակ մանելը։—Ծ. թ.։

տանը կամ շենքում։ Այդպիսի արհեստը հնարավոր ե միայն այն դեպքում, իերը արտադրության գործիքները շատ պարզ են, և արհեստավորը հեշտությամբ կարող ե կրել հետը մի տեղից մյուսը։ Բայց կա արհեստների մի ամբողջ շարք, վորոնք արտադրության շատ խոշոր գործիքներ են պահանջում։ Այդ դեպքում արհեստավորն աշխատանքը փոխադրում ե իր տունը. այդտեղ արդեն մենք տեսնում ենք տնային վարձու արհեստը։ Արտատնային արհեստի դեպքում արհեստավորի գլխավոր ուժը նրա աշխատանքն ե և վոչ թե ունեցած արտադրության գործիքները։ Իսկ տնային արհեստի մեջ արտադրության միջոցներն են սկսում մեծ գեր խաղալ։ Տնային վարձու արհեստ ե, որին ակ, ջուլհակությունը, ջաղացպանությունը, դարբնությունը և այլն։

Ծախու և վարձու արհեստի այդ յերկու ձևերն սկզբում շատ երին տարածված։

Առաջին արհեստավորները միջնադարյան քաղաքում շատ չնշին սեփականություն—միջոցներ ունեյին։ Դրա համար ել նրանք կարող երին միայն վարձով բանել։ Արհեստային արտադրության աճման հետ զուգընթաց մեծացավ նաև արհեստավորների հարստությունը, և նրանք հնարավորություն ստացան նյութեղենն գնել իրենց հաշվին, վոր բավական շահավետ եր նաև պատվեր տվողի համար, քանի վոր արհեստավորները կարող ելին ավելի յավ ճանաչել նյութեղենի հատկությունը։ Այդպիսով արհեստավորն սկսեց մշակել իր սեփական նյութեղենը—առաջ յեկավ ծախու արհեստը։ արգասիքը կամ վաճառքի յեր հանվում կամ պատրաստվում եր սպառողի պատվերով վերջինիս համար։ Համենան դեպս արգասիքն անմիջապես անցնում եր արտադրողից սպառողին, առանց առետրական միջնորդի։

Սրեհ և տի ան- Նորագույն ժամանակը բնորոշվում ե կումը։ ինքնուրուցյն արհեստի խիստ անկումով։ Սակայն դա չի նշանակում, թե արհեստը վերջնական-

պես թողնում ե ասպարեզը։ Արհեստավորների թիվը նույնիսկ աճում ե։ Այսպես, Գերմանիայում 1816 թվին հաշվում եր կես միլիոն սեփական գործի տեր արհեստավոր, 1861 թվին—մի միլիոն, իսկ 1895 թվին—1,3 միլիոն։ Սակայն յեթե արհեստավորների թվական աճումը համեմատենք գործարանային բանվորների թվի աճման հետ, կտեսնենք, վոր առաջինների աճումը շատ ավելի դանդաղ ե առաջ գնում։

Արհեստի անկումն արտահայտվում ե գլխավորապես արհեստավորի վաստակի անկմամբ, վորի ազդեցությամբ առաջ ե գալիս հետևյալ նշանակալից փոփոխությունը. արհեստը, վոր Արևմուտքում նախապես զուտ քաղաքային արտադրություն եր, նորագույն ժամանակում փոխադրվում ե գյուղը կամ խոշոր քաղաքներից՝ փոքրիկ քաղաքները։ Այսպես, Գերմանիայում արհեստավորների կեսից ավելին ապրում ե այժմ գյուղերում կամ փոքրիկ քաղաքներում։ Մեծ քաղաքում արհեստավոր հետզհետե ավելի և ավելի յե գժվարանում արդյունաբերության նոր ձևերի մրցանը դիմանալ։ Արհեստավորը կամ թողնում ե իր արհեստը և մտնում գործարան, կամ դառնում ե տնային բանվոր և աշխատում վաճառատան (մագազին) համար և կամ արդյունաբերական կապիտալիստի պատվերով։

Բայց արհեստի այս անկումը մեծ քաղաքներում բացատրվում ե վոչ այնքան այն հանգամանքով, վոր արհեստն ստիպված ե լինում մրցել մեքենայի հետ, վորչափ առետրի զարգացմամբ քաղաքում։ Քաղաքային բնակչությունը հետզհետե ավելի և ավելի յե վարժվում իր կարիքները բավարարելու համար վաճառատնից գնել իրեն անհրաժեշտ ապրանքները։ Նույնիսկ իրերի վերանորոգությունը, վոր առաջ հանձնարարվում եր արհեստավորներին, այժմ ավելի և ավելի կենտրոնանում ե նույն վաճառատանը, վորտեղից գնված ե տվյալ իրը։ Այսպիսով վոչ թե գործարանը, ալ հենց վաճառատներն են ներկայանում ար-

հեստի գլխավոր թշնամին՝ դարձնելով արհեստավորին կապիտալիստի տնալին վարձու բանվորը:

Որհեսոք Ռու- Որուսականում քաղաքային արհեստը
սառածում: յերբեք այն դերը չի կատարել, ինչ վոր
Արևմուտքում:

Սակայն այդ չի նշանակում, թե Ռուսաստանի համար արհեստը արտադրության միանգամայն ոտար ձև եւ Ընդհակառակը, Ռուսաստանում ներկայումս արհեստը համեմատաբար ավելի շատ ե զարգացած, քան Արևմուտքում—բայց վոչ թե քաղաքում, այլ գյուղում։ Յեթե կենարոնական Ռուսաստանում տիրող գյուղական արգյունաբերությունը տնայնագործությունն ե, սեահող և հարավային Ռուսաստանում տիրապետողը գյուղական արհեստնե։ Դա բացատրվում ե նրանով, վոր հողագործական հարավում գյուղական տնտեսությունը շատ ալլազան հումնոյութեր ե արտադրում, վորը և մշակվում ե հենց տեղում։ Սկզբում այդ վերամշակումը կատարվում եր նույն այդ գյուղացիական ընտանիքի ձեռքով. արդյունաբերության տիրող ձևը տնային արտադրությունն եր՝ սեփական կարիքները բավարարելու համար։ Բայց մի կողմից նախնական բազմանդամ ընտանիքի, մյուս կողմից ել գյուղական տնտեսության բայքայժման ազգեցությամբ քիչ-քիչ սեփական կարիքները բավարարող արտադրությունը փոխվում ե արհեստի։

Այս պրոցեսով հաճախ կարելի յեր դի-
շուլիհակություն տեղ Ռուսաստանում։ Վերցնենք, որինակ,
նից առաջ յե՛՛ Ռուսաստանի հողագործական հարավում
կազ արհեստը։ լայն կերպով տարածված տնային ջուլհա-
կությունը։ Սկզբում տնային ջուլհակությունը ամեն մի-
գյուղական ընտանիքի սեփականությունն եր։ Դեռ ալժմ
ել հարավում կան գյուղեր, ուր համարյա ամեն մի տուն
ջուլհակի դազգլահ ունի, վորի վրա ձմեռը զանազան գործ-
վածքներ ե հյուսում իր կարիքների համար։ Բայց վաղեմի-

տնալին ջուլհակությունը պահպանած այդ գյուղերը սովորաբար պատկանում են այն գյուղերի շարքին, ուր գյուղացիների մեծ մասն ապահովված ե հողով: Իսկ սակագիտող գյուղերում առաջ են գալիս մասնագետ-ջուլհակներ, վորոնք սկսում են զբաղվել ջուլհակությամբ, իրենց մասնագիտական արհեստով և վարձով մշակում են այն մանածները, վոր ուրիշ գյուղացիք հանձնում են նրանց գործելու: Առվորաբար, նույնիսկ բացառապես, ջուլհակները առաջ են գալիս հողագուրկ կամ սակագիտող գյուղացիներից, վորոնք ստիպված են իրենց գոյությունը պահելու համար վորենք գոչ հողագործական աշխատանք գորոնել: Դառնալով մասնագետ-ջուլհակներ, նրանք համուռմ են վորոշ վարպետության, վորից զուրկ են տնային ջուլհակ կանայք: Դրա համար ել այն գյուղացի ընտանիքները, վորոնք կանեփ են ցանում և նրանից տանը թել մանում, շահավետ են համարում այդ թելը, փոխանակ տանը գործելու իրենց ձեռքով, տալ մասնագետ ջուլհակին գործելու փոքր վճարով: Ալսպիսով սկզբնական տնային ջուլհակությունից, վոր կատարվում եր սեփական կարիքների համար, առաջ ե գալիս ջուլհակության արհեստը:

Զուլհակությունն ամենատարածված արհեստն ե Ռուսաստանի հարավում։ Գրեթե յուրաքանչյուր գյուղում միքանի ջուլհակ կա, իսկ սակավահող գյուղերում գյուղական բնակչության մեծ մասն զբաղվում ե այդարհեստով։

Այդպիսի գեղքում ջուհակները մանած են վերցնում վոչ միայն իրենց համագյուղացիներից, ալև հարեան գյուղերից։ Մանը արդյունաբերությունն այստեղ, այնուամենայնիվ, մնում է գեռ վորպես արհեստ, քանի վոր աշխատանքը կատարվում է անսիջապես սպառողի համար։

Կոպիտ քաթան գործելը պենկայից (բույս) տիպիկ տնալին վարձու արհեստ ե, վորը թեև չի զարգանում, բայց չի յել կրնատվում զգալիորեն։ Զնալած տեխնիկայի շափաղանց պարզության, ձեռքի ջուրհակությունը շարու-

նակում ե ապրել գյուղում՝ հենվելով մի կողմից ջուլհակի աշխատանքի չնչին վարձատրության, մյուս կողմից ել այն հանգամանքի վրա, վոր գյուղացին գործվածքի նյութեղենը արտադրում ե սեփական տնտեսության մեջ և վոչ թե փողով գնում: Մանածագործական արհեստի մյուս տեսակները վատ դրության մեջ են: Այսպես, որինակ, մալուսական գյուղում անկման լենթակա արդյունաբերությունների թվին են պատկանում ըրդե կտորներ, մահուդ և այլն գործելը: Նման կտորները բավական թանգ են գնահատվում արդեն և ձեռքով գործելու տեխնիկակի պարզության պատճառով չեն կարողանում դիմանալ գործարանային գործվածքների մրցմանը, և վերջիններս արագ կերպով նրան դուրս են քշում ասպարեզից: Այդ վերջին տեսակետից քիչ նշանակություն չունի նաև վոչխարաբուծության անկումը գյուղերում, վորի շնորհիվ գյուղացին զրկվում ե անհրաժեշտ հում նլութից:

Ս. բ. տ. ա. 6. ա. յ. ի. 6. Արտատնային վարձու արհեստը մոտ վարձու արենս: անցյալում տարածված եր մեր գյուղերում: Դրա ամենալավ որինակը կարող ե ծառայել բուրդ գղելը*: Գղրաբները շրջում են գյուղերը, հաճախ հեռանալով իրենց գյուղից հարլուր վերստ և ավելի, և բուրդ են զգում հենց պատվեր տվողի տանը: Ցերեմն նրանք ամբողջ խմբերով են դուրս գնում, լերբեմն առանձինառանձին, միախակ: Այս արհեստն ել ե ընկնում շնորհիվ բուրդ գցող մեքենայի մրցմանը, բայց զլխավորապես վոչխարաբուծության անկման պատճառով:

Դերձակ: Դերձակությունը վարձու արհեստի այն տեսակն ե, վորը մասամբ արտատնային, մասամբ ել տնային բնույթ ե կրում: Դերձակները լերբեմն աշխատանք են վերցնում իրենց տանը կտուրելու, լերբեմն ել շրջում են գյուղերը, աշխատանք վորոնում և աշխատում

պատվեր տվողի տանը: Վորովհետև պատրաստի հագուստի գործածությունը յեր գյուղերում քիչ ե տարածված, իսկ ընտանիքում կարելը հետզհետե պակասում ե շնորհիվ մեծ ընտանիքի քայլայման և ընդհանրապես տնալին տնտեսության անկման, ուստի գերձակությունը պատկանում ե արագ զարգացող արհեստների թվին: Այդ ասպարեզում նկատելի յե նաև տեխնիկայի առաջադիմություն.. գերձակները և կար անողներն աշխատում են սովորաբար կարի մեքենաներով:

Կուկակաւ: Զարգացող արհեստներից ե նաև կոշկակարությունը, վորն իր տնտեսական կառուցվածքով մասամբ տնալին վարձու արհեստ ե, մասամբ ել ծախուկոշկակարները յերբեմն պատվեր տվողի բերած կաշվից են կոշիկ կարում, հաճախ ել իրենք են գնում կաշին իրենց հաշվին և պատրաստած կոշիկները վաճառում շուկայում իրենց համագյուղացիներին կամ հարեան գյուղերի գյուղացիներին: Ավելի շատ նրանք զբաղվում են մաշված կոշիկներ կարկատելով:

Տակառագործ: Զարգացող արհեստների թվին են պատկանում շատ տեղերում նաև տակառագործությունը (մասամբ տնային վարձու, մասամբ ծախու արհեստ), գարբնությունը (մասամբ տնալին վարձու, մասամբ ծախու արհեստ) և հյուսնությունը (արտատնային վարձու արհեստ): Բըռւտությունը մասամբ միայն արհեստ ե (ծախու), իսկ զլխավորապես տնախագործություն ե: Բըռւտըն իր արգասիքները վաճառում ե լերբեմն անմիջապես սպառողներին.— սայլի վրա յե դարսում կժերն ու ամանեղենը և շրջելով գյուղերը ծախում, իսկ հին ժամանակ փոխանակում եր հաճարի և այլ հացահատիկների հետ.— այս դեպքում նա գյուղական արհեստավոր ե: Բայց ավելի հաճախ, դժվարանալով այդ ձեռվ իր արգասիքները վաճառել, նա ստիպված ե լինում ծախել ապ-

* Հայաստանում ավելի տարածված եր բամբակ գղելը:— Ծ. թ.:

րանքառուներին. այս դեպքում արդեն նրա արհեստը
տնախագործության բնույթ ե ստանում:

Ընդհանուր առմամբ մեր գյուղական արհեստը վոչ
միայն չի ընկնում աշխատող ձեռքերի թվի տեսակետից,
այլ, ընդհակառակն, արագ կերպով աճում եւ Վորոշ ար-
հեստներ ընկնում են, բայց նրանց փոխարեն առաջ են
գալիս ուրիշ արհեստներ և բռնում նրանց տեղը: Գյու-
ղական ընտանիքի տնային տնտեսության անկման հետե-
վանքով, չնայած գյուղացիության աղքատացման, աճում
ե ուրիշ աշխատանքի արգասիքների պահանջը: Այդ ա-
ճող պահանջը մասամբ բավարարվում ե կապիտալիստա-
կան արդյունաբերության արգասիքներով, բայց ելի տեղ
ե մնում արհեստի զարգացման համար, մանավանդ Ռու-
սաստանի հարավում, վոր ունի հարուստ հողագործ գյու-
ղացիություն:

Փ. թ. ս. 6 - յի 6 Ռուսական գյուղի բնորոշ հատկությունն
պրոմիսաներ: Ե զանազան տեսակի արտատնավին պրո-
միսաների լայն տարածումը գյուղերում:

Կենտրոնական Ռուսաստանում հաճախ ամբողջ ըն-
դարձակ շրջաններ ապրում են արտատնային պրոմիսա-
ներով: Այդ շրջանների համարյա բոլոր չափահաս տղա-
մարդիկ ամառը հեռանում են զանազան աշխատանքների,
և գյուղում մնում են միայն կանայք, յերեխաներն ու
ծերունիները: Վերջին տասնամյակներում այդ յերեխութը
չափազանց ուժեղացել ե. գյուղացին չի կարողանում իր
տանը, իր գյուղում հոգալ իր ապրուստը և ստիպված ե
լինում հեռանալ տնից յերկար կամ կարճ ժամանակով
դրսում աշխատանք ճարելու: Միքանի նահանգներում,
ինչպես կոստրումայի, կալուգայի, Տվերի, Յարոսլավի
նահանգներն են, դրսի աշխատանքի յեն դիմում գյուղական
աղքաբնակության մոտ $\frac{1}{5}$ մասը: Ոտարության դիմող
գյուղացիները բազմազան աշխատանքներ են կատարում.
գյուղացիները բազմազան աշխատանքներ են գրավում զանազան
ամենից շատ բանվորական ձեռքեր են գրավում զանազան

շինարարական պրոմիսաները, հետո մեծ տեղ են բռնսում
հենց գյուղական զանազան արհեստները, քիչ բանվոր ձեռ-
քեր չեն գրավում նաև գործարաններն ու ֆաբրիկաները,
առևտրական հիմնարկները և այլն:

Այդ տարագրությունը լուրահատուկ կնիք ե դնում
մեր գյուղի ամբողջ կազմի վրա: Ծնորհիվ գյուղական
աղքաբնակության մշտական տեղափոխություններին, մեր
գյուղը բաղաքի և ընդհանրապես ամբողջ յերկրի հետ ա-
վելի ընդհանուր կյանքով ե ապրում, քան, որինակ, Արև-
մտյան Յեվրոպայի գյուղը, ուր գյուղացին շատ քիչ գեպ-
քում ե թողնում այն կտոր հողը, ուր նա ծնվել ե, և ուր
կենտրոնացած են նրա բոլոր շահերը: Մեր գյուղացին
մասամբ շնորհիվ այդ տեղափոխության, մասամբ ել այլ
պատճառներով ընդհանրապես բոլորովին այլ սոցիալական
տիպ ե ներկայացնում, քան Արևմուտքի գյուղացին:

Ցնայնագործական արդյունաբերություն
կան արդյունա- Ե կոչվում մանր արտադրությունը լայն
քերուրյունն շուկայի համար: Նրա եյական տարբե-
թեկմուտքում: Բությունն արհեստից այն ե, վոր արտա-
հանչ ե Ցնայնա- դրողի և սպառողի միջև տնախագործու-
գործուրյունը: Թյան գեպքում միշտ ել կանգնած ե նրանց
բաժանող միջնորդը (ապրանքառուն): Արդյունաբերու-
թյան ալս ձեւը խիստ կերպով տարբերվում ե արհեստից
իր տնտեսական բնույթով, քանի վոր կապիտալիստա-
կան միջնորդի անհրաժեշտությունը շատ կամ քիչ չափով
մնշում ե մանր արտադրողի ազատությունն ու ինքնու-
րույնությունը:

Կնապես առաջա- Խոշոր արդյունաբերության տնային
ցավ Ցնայնա- պիստեմը զարգանում ե XVIII դարում
գործուրյունը: Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրներում:
Նա առաջ յեկագ մասամբ համբյարային արհեստից մի
շարք աննկատելի անցումներով,—այնպես վոր դժվար ե
ասել, թե վորտեղ եր վերջանում համբյարային արհեստը

և վորտեղ սկսվում տնային սիստեմը, — մասամբ ել սեփական կարիքների համար աշխատող գրուղական տնային արտադրությունից: Գյուղացիները, վոր սկզբում իրենց ավելցուկն եյին ծախում շուկայում, սկսեցին վերջիվերջո հատկապես վաճառելու համար աշխատել և իրենց ապրանքները ծախել վորոշ առևտրականների, այսինքն դարձան տնային բանվորներ: Դրա համար ել գյուղն արգավանդ հող եր ներկայացնում արդեն տնային սիստեմի զարգացման համար. բայց գյուղական արդյունաբերությունը դուրս եր համբյարի իշխանությունից և ազատ համբյարալին ձնշիչ կանոններից: Այդ պատճառով ել առևտրականները, վորպեսզի խուսափեյին համբյարի հսկողությունից, գյուղերին եյին բաժանում հում նյութը մշակելու համար և այդպիսով գյուղում բոլորովին նոր պրոմիսլաներ եյին ստեղծում, վորը և դարձավ տնալին սիստեմի առաջ գալու յերրորդ աղբյուրը:

Չետեր ե կարծել, սակայն, թե ներկարյան կենսու յումս տնային սիստեմն արդեն ապրել են ակուրյան իր դարը և ել չի կարող մրցել կապիտապահուները: Խիստական գործարանի հետ: Ընդհակառակ, հենց կապիտալիստական զարգացման նորագույն պայմաններն իրենք միքանի դեպքերում զարկ են տալիս կապիտալիստական արդյունաբերության արդ ձեր տարածմանը: Այսպես, որինակ, դա մեծ չափով տարածված է Լոնդոնում, Բերլինում և այլ խոշոր քաղաքներում: Անգլիայում այդ սիստեմը կոչվում ե «քրտինք քամելու սիստեմ»:

Տնային սիստեմի ուժը ժամանակակից տնտեսական կազմում նրա մեջ ե, վոր նա հնարավորություն ե տալիս կապիտալիստին մաքսիմումի հասցնել բանվորի շահագործումը: Բանվորը տնային սիստեմում միանգամայն անողնական ե կապիտալիստի հանդեպ: Բանվորները տանը աշխատելով չեն կարողանում կազմակերպվել՝ իրենց

ընդհանուր շահերը պաշտպանելու համար, քանի վոր սովորաբար իրար չեն ճանաչում: Բանվորների այդ անկազմակերպ գրությունը շատ ձեռնտու յե կապիտալիստին. դա հնարավորություն ե տալիս նրան աշխատավարձն իշխանել մինհմումի, իսկ բանվորական որը հասցնել մաքարմումի: Բացի գրանից, տնային սիստեմի դեպքում կապիտալիստն ազատ ե բանվորների համար կացարաններ շինելու և նրանց արտադրության գործիքներ մատակարարելու ծախքերից. — Նրա ծախքերն արտադրության վերաբերմաբ միայն աշխատավարձն ե և հում նյութեղենը: Պետք ե ավելացնել նաև, վոր տնային սիստեմի դեպքում կապիտալիստն ապրանքի պահանջի ամեն մի նվազման ժամանակ կարող ե կրծատել արտադրությունը՝ առանց աշխատանքի թողնելով իր բանվորներին. մինչդեռ գործարանատերը նման դեպքում կորցնում ե իր տոկոսները պարապ կանգնած մեքենաների և շենքի պատճառով: Այսպիսով արդյունաբերական ճգնաժամի ամբողջ ծանրությունը տնային սիստեմի դեպքում ընկնում ե բանվորների վրա: Վերջապես տնային սիստեմի դեպքում կապիտալիստը հնարավորություն ե ունենում խուսափել իրեն նեղող գործարանային որենսգրության պահանջներից:

Մի խոսքով՝ տնային սիստեմի շահավետությունը, կապիտալիստի տեսակետով, այն ե, վոր հնարավորություն ե տալիս նրան բանվորների շահագործումը հասցնել ծայր աստիճանի, և հենց այդ պատճառով ել այդ սիստեմը այդպիս կենսունակ ե, չնայած վոր այդ դեպքում արտադրությունն անհրաժեշտորեն մնում ե մանր և տեխնիկական տեսակետից չափազանց նախնական:

Այդ սիստեմի վասակար կողմը կապիտալիստի համար այն ե, վոր հում նյութեղենը կարող ե փչացել, կամ բանվորը կարող ե ծախել գործատիրոջից ստացած հում նյութեղենը. մեկ ել այն, վոր կապիտալիստը հնարավորություն չունի բարձրացնելու աշխատանքի արդյունա-

բելի յեր բաժանել յերկու շրջանի—հարավ-արևելյան և «մալոռուսական»:

Հարավ-արեվել- Արագորեն աճող և լայն զարգացման լան տրամադրության ունեցող հարավ-արևելյան շրջանը ևս իր հերթին կարելի յեր բաժանել յերկու յենթաշրջանի.—Սարատովի, ուր բացի վերը հիշած պրոմիսլաներից աչքի յեն ընկնում նաև սարպինկա (կտոր) գործող, քամհար պատրաստող պրոմիսլաները և կաշեգործությունը. յերկորդ՝ Ստալինգրադի յենթաշրջան, ուր լայն չափերով զարգացած երդեղեն գործելը:

«Մալոռուսական» շրջանը բաժանվում է կան տրամադրության: 4 մասի.—Վարոնեժի, Պալտավայի, Զերնիգովի, ուր գոյություն ունի պարան գործելու պրոմիսլան, և Անդրդնեպրյան-հյուսիսում, ուր բավական մեծ չափով զարգացած եր փայտագործությունը:

Խ Ս Հ Մ յեվրոպական մասի մնացած վայրերում աչքի ընկնող զարգացած պրոմիսլաներ չկան: Այդտեղի արդյունաբերողների գործունեյությունը նեղ-տեղական բնույթ եր կրում:

Սմալենսկ-Մա- Վերջին տարիներս Դնեպրի վերին հոգիներ տրամադրության սանքի կողմերն սկսեց ձեւավորվել մի նոր պրոմիսլային շրջան—Սմալենսկ-Մագիլկի շրջանը, վոր սկսեց արտահանել գլխավորապես փայտից պատրաստած իրեր և պարան:

Համ Ա. Ռիբնիկովի

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ *

Տնայնագործությունն Անդրկովկասում թեև այնքան մեծ ծավալ չունի, վորքան Ռուսաստանում, այնուամենայնիվ նա մեծ տեղ եր բռնում մեր տնտեսական կան-

* Կարենոր համարեցինք բնագրին ազելացնել յերկու գործ—«Տնայնագործությունն Անդրկովկասում և Հայաստանում»:—Հ. Հ.

քում: Տնայնագործության խոշոր նշանակությունն Անդրկովկասի համար ավելի ևս աչքի յեր ընկնում, յերբ նկատի յենք առնում մեր իրականությունը.—հողի սակավ արդյունավետությունը, կիմայական աննպաստ պայմանները գլուղատնտեսության տեսակետից մի շարք գավառներում, սակավահողությունը, խոշոր արդյունագործության բացը, հում նյութեղենի առատությունը և այլն: Այս պայմանները թելագրում են բնակչությանը գլուղատնտեսությունից գուրս, մանավանդ ձմեռը, ունենալ ոժանդակ զբաղմունք, այսինքն պարապել տնայնագործությամբ: Նույնիսկ վորոշ վայրերում տնայնագործությունը դառնում եր բնակչության գլխավոր զբաղմունքը: Այսպես, որինակ, հենց միայն Ղուբայի գավառում (Ադրբեյջան) 1912 թվին 111 գյուղերից 97-ը, մոտ 40,000 հոգի զբաղվում եր գորգագործությամբ:

Համաշխարհային պատերազմը և նրան հոջորդող ազգամիջյան ու քաղաքացիական կոիվներն զգալի վնաս հասցըրին Անդրկովկասի տնայնագործության: Տնայնագործներից շատերն իսպառ թողեցին իրենց զբաղմունքը հում նյութեղենի բացակայության կամ չափազանց թանգության պատճառով, վոմանք ել շարունակեցին իրենց արհեստը պատվեր տվողի համար, նրա նյութեղենով, այսինքն դարձան տնային բանվոր: Խորհրդային իշխանությունը, սակայն, մեր տնտեսական կյանքի վերածնության և վերելքի ուրիշ գործուների հետ միասին մեծ ուշադրություն գարձրեց նաև տնայնագործության վրա: Այժմ ամեն կերպ խրախուսվում եր տնայնագործությունը՝ աշխատելով միաժամանակ կոռպերացման յենթարկել անհատ տնայնագործներին: 1924 թվի հետազոտությունը ցույց եր տալիս, վոր Խորհրդ: Անդրկովկասի վեց գավառներում (Ղուբա, Զեվադ, Գյանջա, Դուշեթ, Լենինական և Քութայիս) հենց միմիայն դարբինների թիվը հասնում եր 1450-ի, իսկ յերկաթագործների թիվը՝ 66 ի:

Ինչ վերաբերում ե տնայնագործության բազմազանության, պետք ե ասել, վոր Անդրկովկասում գոյություն ունի տնայնագործական արդյունաբերության մոտ 40 տուններին ճյուղ կամ հետեւյալ հիմնական խօսքը՝ բրդի մշակումն, մանածագործություն բրդից (գորդի և շալի արտադրություն) և հետաքրքից (զանազան կտորներ, թաշկինակներ, գուլպաներ), բրուտություն և փայտի մշակումն:

Անդրկովկասում կենտվիճակարի տվյալներով 1924—25 թվին Անդրկովկասում կար 41 411 տնայնագործ-արհեստային ձեռնարկ 67,263 տնայնագործ-արհեստավորով։ Սակայն այդ թվի մեջ չեն մտնում այն տնայնագործները, վորոնք աշխատում են ձեռնարկներից դուրս, իրենց տանը։ Այսպես վոր հավանութեն տնայնագործ-արհեստավորների թիվը առնվազն յերկու անգամ ավելի շատ ե Անդրկովկասում, քան ներկայացնում են կենտվիճակարի տվյալները։

Տնայնագործ-արհեստավորների վիճակի բարելավումը և տնայնագործության զարգացումը պահանջում են կոռպերացման յենթարկել անհատ տնայնագործներին։ Արտելների, ընկերությունների և սիությունների մեջ կազմակերպված տնայնագործները մի շաբթ արտոնություններ են ստանում թե հարկի, թե պատենտի և թե շենքի եժանության կողմից։ Բացի դրանից, կազմակերպված տնայնագործներն ավելի հեշտությամբ և պետական տնտեսական մարմինների ոժանդակությամբ կարող են ձեռք բերել հում նյութ, վարկ և հնարավորություն շահավետ կերպով վաճառելու իրենց արտադրած ապրանքները։ Մինչդեռ անհատ տնայնագործներն ստիպված են ընկնել մասնավոր կապիտալի ճանկը։ Այդ տեմակետից շատ բան չե արված Անդրկովկասում։ Աղբեջանում կոռպերացման են յենթարկված 3,701 հոգի 123 արտելում, Հայաստանում՝ 506 հոգի 36 արտելում, Վրաստանում՝ 664 հոգի 48 արտելում։ Այսպիսով Անդրկովկասում գոյություն ունի ըն-

դամենը 207 արտել, վոր ընդգրկում ե 4871 տնայնագործ-արհեստավոր։ Ուրիշ խոսքով՝ Անդրկովկասի տնայնագործ-արհեստավորների մի աննշան տոկոսն ե միայն կազմակերպված կամ կոռպերացման յենթարկված։ Այդ կողմին ներկայումս ավելի ուշադրություն են դարձնում համապատասխան մարմինները։ Ներկայումս Անդրկովկասի բոլոր հանրապետություններում ել կազմակերպված են տնայնա-արհեստավործական կոռպերացիայի կենտրոններ՝ Աղբեջանում-Ազսենեթբելիզին, Հայաստանում-Հայտնարկոպը և Վրաստանում-Վրաց։ տնարմիությունը։ Ազսենեթբելիզին միացնում ե 123 արտել, Հայտնարկոպը՝ 36, և Վրանարմիությունը՝ 44 արտել։

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Սակավահողությունը, կիմայական աննպաստ պայմանները, մանավանդ լիռանալին գավառներում և խոշորագունագործության բացակայությունն ավելի զգալի յե Հայաստանում, քան անդրկովկասուան մյուս հանրապետություններում։ Այդ հանգամանքն ստիպել ե Հայաստանի գյուղացուն իր ազատ ժամանակը նվիրել տնայնագործական արհեստների և դրանից ստացած յեկամուտով ծածկել իր բյուջելի բացը։

Սակայն Հայաստանի տնայնագործական արդյունաբերությունը սինչեւ որս ել բավարար չափով չի ուսումնասիրված։ Խորհ. Հայաստանի կենտվիճակարը 1925 թվին կատարեց մի հետազոտություն, վոր դարձյալ Հայաստանի տնայնագործության ճիշտ պատկերը չի տալիս։ Հստայդ հետազոտության ամբողջ Հայաստանում գոյություն ունի 7,929 տնայնագործական տնտեսություն 11,530 աշխատողներով, վոր կազմում ե չափահաս ազգաբնակու-

թյան մոտ 3 տոկոսը: Տնայնագործ-արհեստավորների թվի տեսակետից առաջին տեղը պետք է տալ փայտի մշակության: Տնայնագործական արդյունաբերության այդ ճյուղն ամենից ավելի զարգացած է Դիլիջանի գավառում, շնորհիվ անտառին մոտ լինելուն: Համաձայն կենտվիճակարի տվյալների այդ ամբողջ գավառում կա 21 տնայնագործական տնտեսություն 38 աշխատողներով: Սակայն, ըստ ուրիշ տվյալների («Էկոնոմիческий Вестник С. С. Р. Армении», № 4, 1926 թ., Ա. Սարուխանյանի հոդվածից), հենց միմիայն Դիլիջան գավառամասում, ուր այդ տնայնագործական արդյունաբերությունը կենտրոնացած է հին և նոր Դիլիջանում, Պողոս-Քիլիսա, Գոլովինո, Ղոշավանք և Զարխեչ գյուղերում, կա 163 տնայնագործական տնտեսություն 173 աշխատողներով, այն ել միայն 4 գյուղում: Այսինքն տնայնագործների թիվը կազմում է չափահաս ազգաբնակության ընդհանուր թվի $18,5^0/_0$ -ը:

Եկեղեցորդ տեղը տնայնագործական արդյունաբերության մեջ պետք է տալ մանվածագործության: Հենց միմիայն Լենինականի գավառի յերեք գավառամասի 21 գյուղերում հաշվում ե 55 տնտեսություն, վոր զբաղվում ե տնայնագործական արդյունաբերության այդ ճյուղով, վոր ավելի տարածվեց Հայաստանում շնորհիվ արտասահմանից յեկած թյուրքահայ գաղթականության:

Մանվածագործությունից հետո աչքի ընկնող տեղ են բռնել տնայնագործական արդյունաբերության ճյուղերից կաշեգործությունը, գորգագործությունը, ոճառագործությունը, վոսկերչությունը և այլն:

Դորգագործությունը գաղուց իվեր գոյություն ունի Հայաստանում և մեծ ել ապագա ունի, յեթե կանոնավոր հիմքերի վրա գրվի: Դորգագործությունն ավելի տարածված է Դիլիջանի գավառի Իջևան և Կարմիր-գյուղ գավառամասերում: Այդ յերկու գավառամասի հենց միայն

4 գյուղերում — Իջևան, Սև-Քար, Գյոլքենդ և Չայքենդ — գորգագործությունն գիտեն մոտ 592 տնտեսություն: Բոլոր տնտեսությունների թիվը հաշվելով $1,222^{\circ}$ տեսնում ենք, վոր այդ գյուղերի ընակչության $48^0/_0$ -ը ծանոթ է գորգագործության: Ճիշտ ե, դրանք բոլորն ել գորգագործությամբ չեն զբաղվում. այսպես, 25—26 թվի ձմեռը 592 տնտեսությունից միայն 338-ը կամ $27,5^0/_0$ -ն եր զբաղվում գորգագործությամբ. սակայն կզբաղվեն, յեթե բավարար չափով և ձեռնտու գներով հում նյութ (բրդեղեն) տրամադրվի նրանց: Հենց այդ է պատճառը, վոր գորգագործությունը միքանի գյուղերում տնային արհեստի ընույթ ե ընդունել: Իջևանում, որինակ, գորգագործ 39 տնտեսությունից 30-ն աշխատում եր պատվեր տվողների համար, նրանց նյութեղենով: Նույնը և Սև-Քարում, ուր գորգագործ տնտեսությունների կեսն իրենց հարուստ համագյուղացիների պատվերներով եր աշխատում: Միայն Կարմիր-գյուղ գավառամասի թուրքական գյուղերում ե, ուր տնայնագործները շարունակում են աշխատել գլխավորապես իրենց սեփական հում նյութով՝ պակասը գնելով հարեան գյուղերից կամ անցնող քոչկորներից:

Բավական տարածված է Հայաստանում նաև կավի մշակությունը: Տնայնագործության այդ ճյուղը, վոր կոչվում ե բրուտություն, մեր գյուղական տնտեսության անհրաժեշտ կավե ամաններ ե պատրաստում: Մինչև այժմ ել Հայաստանի քաղաքներն ու գյուղերը գործ են ածում գինու կարասներ, զանազան ձեռի և մեծության բղուղներ, կտեր, փարչեր, գավեր, խնոցիներ և այլն: Միշաքը գյուղերում կավից պատրաստում են նաև ջրի խողովակներքունդեր և քիրամիտ:

Կավի մշակության գործում աչքի յե ընկնում Յուվագյուղը Եերևանի գավառում, ուր գյուղական 392 տնտեսությունից 89-ը զբաղվում են կավե ամանների արտա-

գրությամբ՝ Յերևանի գավառում բըրուտների թիվը հասնում է 120-ի:

Սակայն պետք են նկատել, վոր բըրուտությունը շարունակվում է իր հին ձեռք. Նրա վորակը չի բարձրանում շնորհիվ մի շարք հանգամանքների: Մեր բըրուտները շինի ամաններ չեն արտադրում, չնայած մեծ պահանջին: Նրանք ծանոթ չեն նույնիսկ չինելու (глазуровка) արհեստին, թեև Յուվայի կամաց այդ տեսակետից մեծ հնարավորություններ են տալիս:

Այսպես թեև տնայնագործությունը Հայաստանի գյուղացու բյուջեյում խոշոր դեր է կատարում, հաճախ կազմելով նրա գոյության գլխավոր աղբյուրը, բայց և այնպես նրա արտադրության վորակը չի բարձրանում կամ շատ քիչ և բարձրանում: Դա ունի իր պատճառները, վորոնց մեջ գլխավոր տեղը բռնում է անհատ տնայնագործի անողնական վիճակը: Թե հում նյութ ձեռք բերելու, թե արտադրելու, թե արտադրածը շահավետ կերպով ծախելու գործում անհատ տնայնագործը անողնական է, մենակ և յենթակա ապրանքառուի կամ չարչի առկտրականի: ազդեցության: Նրան այդ վիճակից կազմատի, իհարկե, կոոպերացիան, հնարավորություն տալով նրան բարելավելու իր աշխատանքը, արտադրության վորակը և տնտեսական վիճակը: Այդ ինդրով շահագրգուված են մեր բանվորացիական կառավարությունը, քանի վոր տնայնագործությունը ներկայումս ոժանդակ է հանդիսանում պետական արդյունաբերության և զարկ տալիս յերկրի տնտեսական զարգացմանը: Դրա համար ել Խորհրդային իշխանությունը ամեն կերպ ընդառաջ է գնում տնայնագործության զարգացմանը: Հայաստանում յերկու տարի լե արդեն գործում է Հայաստանի Տնայնա-Արհեստագործական կոոպերացիան—«Հայտնարկոպը», և այդ կարճ ժամանակամիջոցում կարողացել են բարվական գործ կա-

տարել տնայնագործների կոոպերացման տեսակետից: Նամիչև այժմս կարողացել են կազմակերպել հետեւյալ արտելները:

1. Զուլհակների	10	արտել	113	անդամով
2. Վոսկերիչ փորագր.	2	»	13	»
3. Ծխախոտագործն.	1	»	8	»
4. Ոճառագործների	2	»	10	»
5. Լուսանկարիչների	1	»	5	»
6. Շաքարագործների	1	»	5	»
7. Ցեղիկագործների	1	»	5	»
8. Մետաքսագործների 3	»		24	»
9. Գորգագործների	1	»	23	»
10. Հացագործների	1	»	5	»
11. Փայտագործների	5	»	196	»
12. Թղթագործների	1	»	5	»
13. Կաշեգործների	3	»	61	»
14. Դերձակների	1	»	5	»
15. Վարսավիրաների	1	»	5	»
16. Ճարտարարվեստի	1	»	10	»
17. Զեռագործի	1	»	13	»

Հնդամ. 35 արտել 506 անդամով:

«Հայտնարկոպի» նախաձեռնությամբ և կառավարական համառուսական մարմինների աջակցությամբ Հայաստանի տնայնագործական արդյունաբերությունը զարգանալու և բարձրանալու լայն հեռանկարներ ունի: Առանձնապես ուշագրության արժանի յեն տնայնագործության այն ճյուղերը, վորոնք պետական արդյունաբերության լրացուցիչ մասն են կազմում և գյուղացու գոյության գլխավոր աղբյուրը հանդիսանում*:

Հ. Հովհաննես

* Փաստական և թվական տվյալները քաղել ենք Ա. Արքուխանյանի հոդվածից («Էկոնոմիկ. Վետոն Հ. Արքուխանյանի հոդվածից» («Հայաստան» 1926 թ., № 4) և որաթերթերից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերես

Հ Ա Ռ Յ Ե Ր .

1. Ի՞նչ ենք հասկանում տնային արտադրություն ասելով:
2. Տնտեսության վեր ձեզն ե հատուկ տնային արտադրությունը:
3. Կմ այժմ ել մեր գյուղերում տնակին արտադրություն.
4. Մեր գեղարվեստական գրականության մեջ կմ հիշատակություն տնային արտադրության մասին (կարդալ Խաչ. Արովյանի «Վերք Հայաստանի»-ից համապատասխան հատվածը):
5. Ի՞նչո՞ւ քայլայվեց տնային արտադրությունը:
6. Ի՞նչ տարբերություն կա արհեստի և տնային արտադրության մեջ:
7. Հիշատակել մեր քաղաքներում և գյուղերում գոյություն ունեցող արհեստները:
8. Ի՞նչպիսի տարագիր արհեստներ կան մեր գյուղերում:
9. Բացատրել արհեստի, պրոմիսլաների (արհեստագործության) և տնայնագործության տարբերությունները:
10. Հիշատակել մեղնում գոյություն ունեցող տնայնագործական արդյունաբերության ճյուղերը և բացատրել նրանց նշանակությունը:
11. Հայաստանի վեր շրջաններից են գնում դրսի աշխատանքների և գլխավորապես մուր են գնում (կարդալ գեղարվեստական գրականությունից համապատասխան հատվածներ):
12. Յերբ կրադարի կամ նվազագույն չափերի կհասնի դրսի աշխատանքի գնալը:
13. Ի՞նչո՞ւ Զանգեզուն այժմ ավելի քիչ աշխատավորներ և ուղարկում Բագու, քան առաջ:
14. Ի՞նչ միջոցներով կարելի յե բարձրացնել տնայնագործական արդյունաբերությունը. կոոպերացիայի դերը և Հայտնարկությը:
15. Տնայնագործական և գործարանային արդյունաբերությունների տարբերությունը:

<p>Տնային արտագրություն. Արհեստ. Տնայնագործությունը</p> <p>Մինչեվ հեղափոխություն – ըստ Մ. Ցուգան-Բարանվակուտ.</p> <p>Արդյունաբերության ձևերը</p> <p>Տնային արտադրություն</p> <p>Նրա զարգացման առաջին աստիճանները</p> <p>Տնային արտադրության քայլայումը</p> <p>Արհեստ</p> <p>Արհեստի ձևերը</p> <p>Արհեստի անկումը</p> <p>Արհեստը Ծովասատանում</p> <p>Տնային ջուհակությունից ինչպես առաջացավ արհեստը</p> <p>Արտատնային վարձու արհեստ</p> <p>Դերձակ</p> <p>Կողկակար</p> <p>Տակառագործ</p> <p>Արտատնային պրոմիսլաներ</p> <p>Տնայնագործությունն Արեմուտքում</p> <p>Ինչ և տնայնագործությունը</p> <p>Ինչպես առաջացան տնային պրոմիսլաները</p> <p>Տնայնագործության կենսունակության պատճառները</p> <p>Տնայնագործություն և փարբեկա</p> <p>Տնայնագործությունը Ծովասատանում</p>	<p>3</p> <p>3</p> <p>4</p> <p>5</p> <p>7</p> <p>7</p> <p>8</p> <p>10</p> <p>10</p> <p>12</p> <p>12</p> <p>13</p> <p>13</p> <p>14</p> <p>15</p> <p>15</p> <p>15</p> <p>16</p> <p>18</p> <p>19</p>
<p>Փամանակակից մաեր արգյունաբերությունը ըստ Ա. Ռիբենիկովի:</p>	
<p>Կենտրոնական արդյունաբերական շրջանի մասն ը արդյունաբերությունը</p>	
<p>19</p>	
<p>Հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան շրջանները</p>	
<p>21</p>	
<p>Վոլգա-Ուկայի շրջան</p>	
<p>25</p>	
<p>Հարավ-արևելյան շրջան</p>	
<p>23</p>	
<p>Մալառուական շրջան</p>	
<p>26</p>	
<p>Սմոլենսկ-Մագիլյովի շրջան</p>	
<p>26</p>	
<p>Տնայնագործական արդյունաբերությունը Հայաստանում</p>	
<p>29</p>	

Հայ

ՁԻ - 1
ՏԵՂ - 1

176-8 ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՀ Ազգային գրադարան



NL0193439

28387